

# ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

## Ս. Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԳԴՀՀ դասախոս,

Գիլուվայունների ազգային ակադեմիայի հայցորդ

Այս հոդվածի նպատակն է զուգադրական քննությամբ ներկայացնել ժամանակակից հայերենի և անգլերենի բայական հարադրությունների անվանական բաղադրիչների բառակազմական կաղապարները:

Բայական հարադրությունները լայն և բազմազան գործածություն ունեն զուգադրվող լեզուներում: Դրանց միջոցով կարելի է արտահայտել զանազան հարաբերությունների և գործողությունների նրբիմաստներ:

Մեր ուսումնասիրության նյութը վերցած է հետևյալ բառարաններից՝ Է. Աղայան. «Արդի հայերենի բացատրական բառարան»<sup>1</sup>, Պ. Բեդիրյան. «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»<sup>2</sup>, Ա. Սութիայան և Ս. Գալստյան. «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»<sup>3</sup>, Ա. Վ.Կունին. «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարան»<sup>4</sup>, Օքֆորդի Դարձվածային բայերի բառարան<sup>5</sup>: Նյութի ուսումնասիրությունը կատարվել է նկարագրական և զուգադրական մեթոդներով: Երկու լեզուներում բայական հարադրությունների վերաբերյալ շատ ուսումնասիրություններ կան, սակայն անվանական հարադրիների բառակազմական կաղապարները նկարագրող ուսումնասիրությունները շատ չեն: Հայերենում գրաբարի բայական հարադրությունների բառակազմական կաղապարների ուսումնասիրությամբ զբաղվել է Լ. Հովսեփյանը<sup>6</sup> իր «Գրաբարի

<sup>1</sup> Աղայան Է., «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:

<sup>2</sup> Բեդիրյան Պ. Ս., «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», Երեւանի պետական համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2011:

<sup>3</sup> Սութիայան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան», Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 1975:

<sup>4</sup> Կոնին Ա. Բ. , Անգլո-ռուսский Фразеологический словарь, изд. “Русский Язык”, 1984.

<sup>5</sup> Oxford Phrasal Verb Dictionary , Oxford University Press, 2002.

<sup>6</sup> Հովսեփյան Լ.Ս., «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը», Եր., 1987, էջ 56:

բառակազմության վերլուծական տիպը» գրքում: Անգլերենի բայական հարադրությունների անվանական հարադիրների բառակազմական կաղապարներն ուսումնասիրված չեն:

Բայական հարադրությունները կազմված են լեզվական պատրաստի, ինքնուրույն գործածություն ունեցող միավորներից և արտահայտում են մեկ բառային իմաստ, որը տարբեր է հարադիրների բառային իմաստներից: Զուգադրվող լեզուներում վերլուծական կառուցվածքի բայերի բայական հարադիրները միատարր են, իսկ անվանական հարադիրները ոչ միայն բազմատարր են՝ պատկանում են տարբեր խոսքի մասերի, այլև աչքի են ընկնում բառակազմական կառուցվածքի բազմազանությամբ:

Բայական հարադրությունների մեջ հանդիպող անվանական մասերի բառակազմական կաղապարները ներկայացնելու համար կիրառում ենք Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը» գրքում կիրառված սկզբունքը և մշակված պայմանական նշանները՝ S-սկզբնահիմք, հիմնական ձևով, a-բառակազմական ձևով, f-բառահարաբերական ձևով, j-հոդակապ, c-շաղկապ, կրկնվող միավորները ընդգծված են: Ստորև ներկայացվում են ժամանակակից հայերենի և անգլերենի բայական հարադրությունների մեջ հանդիպող անվանական մասերի բառակազմական կառուցվածքային կաղապարները:

Բայական հարադրությունների մեջ հիմնական ձևովթից կազմված հարադիր ունեցող բայերը մեծ թիվ են կազմում: Արմատական բառերով արտահայտված հարադիրները կարող են լինել գոյականներ, ածականներ, թվականներ, դերանուններ, մակրայներ, կապեր, նախորդներ, ձայնարկություններ: Դրանք կարող են հաղես գալ և՝ ուղիղ ձևով՝ առանց որևէ թեքույթի կամ հոգնակերտ վերջավորության, և՝ բառահարաբերական ձևովթներով: Արմատական ձևովթից կազմված հարադիրների հիմնական կաղապարներն են՝ S, Sf, Sff:

S-պարզ արմատական բառերով արտահայտված հարադիրները հիմնականում գոյականներ են: Դրանք հայերենում գերակշռում են մյուս խոսքի մասերի համեմատությամբ, սակայն S կաղապարով հարադիրները կարող են լինել նաև ածականներ, թվականներ, մակրայներ, կապեր, ձայնարկություններ, օր՝

գոյականներ–աղամ սրել, արյուն թափել, արև առնել, երազ բացել,  
երգ կապել, թեյ տալ, սով քաշել, սուզ անել,

ածականներ–բաց լինել, էժան նսփել, թեթև գալ, թեք տալ, լավ  
լինել, ծանր նսփել, ծուռ գալ, կանաչ կտրել, կարմիր կապել, կես լինել, կից  
անել, մեծ խոսել, սև կապել,

թվականներ–երկու անել, մեկ լինել, ութ գրել,

մակրայներ–եղանակ բերել, հեղու տալ, ներս բերել, շուրջ գալ, պինդ  
կպչել,

կապեր–դեմ բերել, դուրս անել, մոդ լինել, վրա բերել, վեր բերել,

ձայնարկություններ կամ բնաճայնական բառեր–թու անել, ծիկ  
անել, հափ անել, հող անել, դու կանչել, վայ անել, փիշու անել:

Անգլերենում այս կաղապարով կազմված հարադիրները նույնպես  
ամենամեծ խումբն են կազմում: Տ կաղապար ունեցող հարադիրները  
կարող են լինել.

գոյականներ՝ assume air «կարևոր ծնանալ», bear fruit «արդյունք  
տալ», set course «ուղղություն վերցնել», take effect «ցանկալի արդյունք  
տալ», take power «իշխանություն ստանալ», talk shop «գործից խոսել»,

ածականներ՝ break even «ծախսերը ծածկել», burst open «դուրը  
կոդրել», come true «իրականանալ», die hard «դանդաղ մեռնել», get grey  
«անհանգստանալ», go far «չափերն անցնել»,

դերանուններ՝ bear it «գնալ, հեռանալ», beat all «ակնկալիքները  
գերազանցել», catch it «հասնել», get it «պարիժը ստանալ»,

թվականներ՝ become one «ամուսնանալ», take ten «շունչ առնել»,

նախդիրներ՝ act for «փոխարինել», aim at «ծգմել», be after  
«հեղութել մեկին», beat to «հաղթել մրցույթում», fix up «կարգի բերել»,

մակրայներ՝ flood back «հանկարծակի հիշել», flunk out «դպրոցից  
դուրս մնալ», get there «նպարակին հասնել», hold away «դեկավարել»:

Անգլերենում                   արմատական                   հարադիրների                   ճնշող  
մեծամասնությունը նախդիր կամ մակրայ է: Սա պայմանավորված է  
անգլերեն լեզվի անջատական վելուծական կառուցվածքով:

Անգլերենում կա նաև բայական հարադրությունների մի խումբ,  
որում բայական հարադրության երկու հարադիրներն էլ բայեր են:  
Հարադրությունների այս տեսակը կազմվում է հիմնականում let բայից,  
թեև հազվադեպ հանդիպում են նաև այլ բայեր: Օրինակ՝ let drop  
«բերանից թոցնել», let fly «նեփել, շպրտել», let go «ձեռքից բաց թողնել»,

*let loose «ազակություն դրալ», lie follow «որոշ ժամանակով չօգտագործել»:*

Այս բայերը պետք է շփոթել հայերենի գուգաղիր բայերի հետ, քանի որ վերջիններիս իմաստը կազմված է երկու բայերի բառային իմաստներից, մինչդեռ անգերենի վերոնշյալ բայերն արտահայտում են մեկ իմաստ՝ որոշակի նրբերանգով, կամ լիովին դարձվածբանական միավոր են:

S<sup>f</sup>-հիմնական ծևոյթ+բառահարաբերական ծևոյթ: Այս կաղապարով կազմված գոյական հարադիրներն ունեն հետևյալ հոլովներին հատուկ քերականական իմաստ և ծևավորվածություն: Օրինակ՝

ուղղական՝ ասկողը բարձրանալ, արևը խավարել, բանը պրծնել, գլուխը գնալ, գույնը թռչել,

տրական՝ ափին դրալ, թկին կանգնել, գլխի ընկնել, գործի գցել, դարի դրալ, զրոյի հավասարեցնել, թելին դրալ, թղթին հանձնել, լեզվին դրալ, ծաղրի հանել,

հայցական՝ բախս ունենալ, բարձը փոխել, բարևը կդրել, կոկորդը մաքրել, մորուքը համրել,

բացառական՝ թերքից ընկնել, գահից զրկվել, գլխից հանել, գործից գցել, երեսից ձգել, թախսից գցել,

գործիական՝ բանով լինել, գրքով շարժվել, երազով ընկնել, խոսքով դարվել,

ներգոյական՝ օդում լինել, հիմքում դնել, հողում պառկել, մղքում դնել, սրբում պահել, դեղում դոփել:

Հայերենում S<sup>f</sup> կաղապարով կազմված հարադիրներում f-ը կարող է լինել հոգնակերտ մասնիկ, օր.՝ զոհեր դրալ, կապեր գցել, ջրեր անցնել, սակայն պետք է նշել, որ հարադիրների կազմության S<sup>f</sup> կաղապարի այս տեսակը այնքան էլ գործածական չէ: Հոգնակերտ մասնիկները հիմնականում հանդես են գալիս հոլովական վերջավորությունների հետ՝ ներկայացնելով S<sup>f</sup> կաղապարը, որի մասին կխոսենք ստորև:

S<sup>f</sup> կաղապարում S-ը կարող է լինել նաև ածական, օր.՝ կանաչով պատել, կարմրին դրալ, նեղը գցել, նմանը դրալ, պաղի դրալ: S<sup>f</sup> կաղապարով հարադիրներ կարող են կազմված լինել նաև կապերից, օր.՝ մեջը մնալ, վրան թթվեցնել, դրակից ելնել և մակրայներից, օր.՝ կողքը մրնել, հերսից գնալ, սակայն վերջիններս շատ փոքր թիվ են կազմում:

Անգլերենում S<sup>f</sup> կաղապարով կազմված հարադիր ունեցող վերլուծական բայերը քիչ չեն: Անգլերենում հարադիրները կարող են ունենալ հետևյալ քերականական մասնիկները կամ ծևավորումը՝

հոգնակի թվի վերջավորություն, ինչպես՝ *make amends* «վնասները փոխապուցել», *mend fences* «կապ պահպանել», *move stakes* «դեղի շարժվել», *name names* «անունները թվել», *see things* «զառանցել»,

ներկա դերբայի -ing վերջավորություն, ինչպես՝ *catch smb bending* «մեկին վար վիճակի մեջ դնել», *keep smb dangling* «լարված պահել», *keep smb guessing* «կասկած առաջացնել», *loose one's footing* «սայթաքել», *make the running* «օրինակ ծառայել»,

անցյալ դերբայի -ed վերջավորություն, ինչպես՝ *stand corrected* «սխալներն ընդունել»:

Գոյություն ունի նաև բայերի մի փոքր խոմք, որոնցում հարադիրը ոչ թե կազմված է S<sup>f</sup> կաղապարով, այլ լիովին քերականական փոփոխության է ենթարկված, ինչպես՝ *be left (left-ը leave* «թողնել» անկանոն բայի անցյալի հիմքն է) «խարված լինել», *think better (better-ը good* «լավ» ածականի բաղդատական աստիճանն է) «միզքը փոխել»:

S<sup>ff</sup>-այս կաղապարը ենթադրում է մեկ հիմնական և երկու քերականական ձևով կազմված հարադիր, որում S-ը գոյական է: Սրանք հիմնականում հոգնակերտի և որոշյալ հոդի զուգորդումով կազմված ձևեր են: Օր.՝ կապերը խզել, հոնքերը կիսել, մազերից ծծել, նալերը դնել, պողերն երևալ: Այս կաղապարը բնորոշ է միայն հայերենին, որտեղ մենիմաստ քերականական մասնիկները կարող են հաջորդաբար ավելանալ հիմքին:

### Նախածանցավոր կազմություններ

Հայերենում նախածանցավոր կառուցվածք ունեցող հարադիրների թիվը մեծ չէ: Այս խմբի մեջ են մտնում aS, aS<sup>f</sup>, ajS, a(aS<sup>f</sup>)

aS-բառակազմական ձևով+հիմնական ձևով՝ անվավեր համարել, գերածախս անել, ապուշ կրտել, գերած դալ, դժբախս լինել, ընդառաջ ելնել,

աS<sup>f</sup>-բառակազմական ձևով+հիմնական ձևով+հիմնական ապրել,

ajS-բառակազմական ձևով+հոդակապ+հիմնական ձևով, ինչպես՝ համախոհ լինել, համախումք լինել, դարագիր լինել, դարադեմ գնալ,

a(aS<sup>f</sup>) – երկու բառակազմական ձևով+հիմնական ձևով+բառահարաբերական ձևով, ինչպես՝ անընդհապի անցնել:

Նախածանցավոր հարադիրներ ունեցող բայական հարադրությունները անգերենում նույնպես քիչ են, օր.՝ aS - beat a retreat «փախչելով փրկվել», think aloud «բարձրաձայն մղածել», aS<sup>f</sup> - come unstuck «ձախողվել»:

### Վերջածանցավոր կազմություններ

Զուգադրվող լեզուներում վերջածանցավոր հարադիրները ավելի մեծ թիվ են կազմում, քան նախածանցավորներն են: Հայերենում այս խմբի մեջ են մտնում հետևյալ կաղապարներով կազմված կառուցները՝ Sa, (Sa)<sup>f</sup>, (S<sup>f</sup>a)<sup>f</sup>, S<sup>f</sup>a, Saa, (Saa)<sup>f</sup>:

Sa–հիմնական ձևով+բառակազմական ձևով. այս կաղապարով հայերենում միայն գոյական և ածական հարադիրներ կան, ընդ որում գոյականներն ավելի շատ են .

գոյականներ՝ դիակ դառնալ, զինվոր գնալ, զորություն դրալ,  
թագավոր նստել, թանկություն գցել, թիակ վարել,

ածականներ՝ արժանի անել, զրադարձ լինել, զգասր կանգնել,  
ճերմակ ընկնել, պարտասր կենալ, տեղյակ լինել, ցամաք մնալ,

(Sa)<sup>f</sup>–հիմնական ձևով+բառակազմական ձևով+բառահարաբերական ձևով, ինչպես՝ գործարքով աշխատել, դրոշակը պարզել,

S<sup>f</sup>a–հիմնական ձևով+բառահարաբերական ձևով+բառակազմական ձևով: Այս կաղապարով կազմվում եմ փորբաթիվ գոյական հարադիրներ, օր.՝ խոսելիք դառնալ,

(S<sup>f</sup>a)<sup>f</sup> – մոռացության դրալ,

Saa – հիմնական ձևով+ 2 բառակազմական ձևով կաղապարով կազմվում են մի քանի գոյական հարադիրներ, օր.՝ քաղաքացիություն սրանալ:

Անգերենում վերջածանցավոր հարադիրները ունեն հետևյալ բառակազմական կաղապարները՝ Sa, S<sup>f</sup>a:

Sa – հիմնական ձևով+բառակազմական ձևով. Այս կաղապարում S-ը կարող է լինել՝

գոյական՝ bear smbs boiler «մեկին կործանել», cut the painter «դառնալ ինքնուրույն», curtail (a) freedom «սահմանափակել ազատությունը», spell baker «դժվարության հանդիպել», take a flier «թռչել», take smb's likeness «մեկին լուսանկարել»,

ածական՝ *be agreeable* «համապարասխան լինել», *say a mouthful* «ցնցող միզք արդահայտել»,

մակրայներ՝ *breathe freely* «ազար շունչ քաշել»,

Saf-հիմնական ձևով+բառակազմական  
ձևով+բառահարաբերական ձևով, ինչպես՝ *go glimmering*  
«անհեղանալ», *look daggers* «զայրացած հայացքով նայել», *relieve one's feelings*  
«սիրող թեթևացնել», *sink one's differences*  
«լրարածայնությունները վերացնել»:

Չուգադրվող լեզուներում կան նաև երկու արմատական և/կամ բառակազմական և/կամ բառահարաբերական ձևովներից կազմված հարադիր ունեցող հարադրություններ: Հայերենում այս կաղապարով կազմված շատ հարադիրներ կան: Առանձնացրել ենք նման կաղապարների երեք հիմնական տեսակ՝ հոդակապով կազմություններ, անհոդակապ կազմություններ և շաղկապով կապակցված կազմություններ:

1. Անհոդակապ կազմություններ՝ SS (SS, SSa, SS<sup>f</sup>, SSa<sup>f</sup>, S<sup>f</sup>S, SSaf, S<sup>f</sup>Sf, S<sup>f</sup>Sa, SaSa):

SS-միայն երկու հիմնական ձևովից կազմված հարադիր ունեցող բավականին շատ են. ավելպակաս խոսել, արևերես հանել, բերանբաց մնալ, գիրկապ անել, երկուլրակ լինել, խաչկապ անել,

SS-նոյն հիմնական ձևովից կրկնությամբ կազմված հարադիրները կարող են ունենալ համադրական կառուցվածք, ինչպես՝ դերդեր դառնաև սակայն հիմնականում գծիկով են գրվում, ինչպես՝ թել-թել անել, ծառուծառ լինել, ծիվ-ծիվ անել, ծուփ-ծուփ դրալ, մաս-մաս անել, մեջ-մեջ անել:

Այս կաղապարով կազմություններում կրկնվող արմատներից երկրորդը կարող է նաև որոշակի ձևափոխության ենթարկված լինել, ինչպես՝ հաթաքա դրալ, հայ-հոյ անել:

SSa-երկու հիմնական և մեկ բառակազմական ձևովից կազմված հարադիր ունեցող բայերը մեծ թիվ չեն կազմում. Երեսծեծանք դրալ, սուլրմեռուկ անել: Այս կաղապարով կազմված հարադիրներում հիմնական ձևովներից մեկը կամ երկուաը կարող են հնչունափոխված լինել, ինչպես՝ դրանդրիկնություն անել: Այս կաղապարի շրջանակներում հանդիպում են նաև գծիկով գրվող հարադիր ունեցող բայեր, ինչպես՝ ծայն-ծպղուն չհանել:

SS<sup>f</sup>-նոյն հիմնական ձևութիւն կրկնությամբ և բառահարաբերական ձևությով կազմված հարադիրներ, ինչպես՝ երեսերեսի դալ, խոսքիուրի դալ, վերվերի բռնել: Այս կաղապարով կազմություններում երկու արմատները կարող են կապակցվել նաև գծիկով, ինչպես՝ գլուխ-գլխի դալ, թև-թևի դալ: f-ը այս կաղապարում սովորաբար տրական հոլովի -ի հոլովակերտ մասնիկն է:

SSa-նոյն հիմնական ձևութիւն կրկնությամբ և բառակազմական ձևություն կազմված հարադիրները շատ չեն, ինչպես՝ խորխորապ բացել:

SaS-հիմնական ձևություն+բառակազմական ձևություն+հիմնական ձևություն: Այս կաղապարով կազմված հարադիրները նոյնպես շատ չեն, ինչպես՝ դեմքնդառաջ գալ:

S<sup>f</sup>S-հիմնական ձևություն+բառահարաբերական ձևություն+հիմնական ձևություն: Այս կաղապարով կազմությունները նոյնպես փոքրաթիվ են, որոնցում երկու հիմնական ձևություններից առաջնը քերականական ձևափոխության է ենթարկված, ինչպես՝ գլխիկոր գալ:

SSaf-երկու հիմնական ձևություն+բառակազմական ձևություն+բառահարաբերական ձևություն, ինչպես՝ սուպմեռուկի դալ:

S<sup>f</sup>Sf-հիմնական ձևություն+բառակազմական ձևություն+հիմնական ձևություն+բառակազմական ձևություն: Հարադիրը հիմնականում ունի գծիկով գրություն, ինչպես՝ ուրով-գլխով կորչել, դեղով-բարձով հիվանդանալ: Ինչպես տեսնում ենք, f-ը այս կաղապարում գործիական հոլովի -ով հոլովակերտն է: f-ը կարող է լինել նաև բացառականի -ից հոլովակերտը, ինչպես՝ ձեռքից-ողքից ընկնել:

S<sup>f</sup>Sf-հիմնական ձևություն+բառահարաբերական ձևություն+կրկնվող հիմնական ձևություն+ կրկնվող բառահարաբերական ձևություն: Քերականական ձևափոխությունը այս կաղապարով կազմություններում արտահայտվում է տրական հոլովի -ի, -ին հոլովակերտ մասնիկով, ինչպես՝ դոի-դոի ածել, պեծին-պեծին դալ, երեմն նաև գործիականի -ով մասնիկով, ինչպես՝ ուրով-գլխով կորչել, դնով-դեղով կորչել: Այս հարադիրները գծիկով են գրվում:

SSa-հիմնական ձևություն+բառահարաբերական ձևություն+հիմնական ձևություն+բառակազմական ձևություն, ինչպես՝ կարվամեռուկ դալ:

SaSa-հիմնական ձևություն+բառակազմական ձևություն+կրկնվող հիմնական ձևություն+ կրկնվող բառակազմական ձևություն: Այս կաղապարով կազմված հարադիրներում հիմնական ձևությունը կարող է կրկնվել կամ

նոյնությամբ, ինչպես՝ բզիկ-բզիկ անել, ծվիկ-ծվիկ անել, մաղիկ-մաղիկ բերել կամ որոշակի փոփոխության ենթարկված, ինչպես՝ խունջիկ-մունջիկ գալ, ծուռփիկ-մուռփիկ բայցել: Հիմնականում գործածվում է -իկ վերջածանցը:

Անգլերենում երկու արմատից կազմված հարադիրները ունեն հետևյալ կաղապարները՝ SS և SS<sup>f</sup>: Այս կաղապարով կազմված հարադիր ունեցող բայերը շատ չեն:

SS-երկու հիմնական ձևույթ - *blot one's copybook* «իր անունը մրուցել, explode a bombshell» «անել կամ ասել ցնցող մի բան», *get nowhere* «ոչնչի չհասնել», *get somewhere* «ինչոր բանի հասնել», *jump the broomstick* «ամուսնանալ առանց արարողակարգի», *make a comeback* «ոդքի կանգնել», *ride the whirlwind* «դրության դերը լինել», *steal the spotlight* «հաջողությանը խանգարել»:

SS<sup>f</sup>-երկու հիմնական ձևույթ+բառահարաբերական ձևույթ, ինչպես՝ *dog smb's footsteps* «մեկի հեղթերով գնալ», *lift one's eyebrows* «ունքերը վեր բաշել», *through chartwheels* «թավալվել»:

Հոդակապով կազմություններ՝ SjS (SjS, SjS, SjSa, SjS<sup>f</sup>, SjSaf, SaJS, Sfjs<sup>f</sup>, SaJSaf, SjSff, aSjS): Հայերենում հոդակապով կազմությունները բավականին մեծ թիվ են կազմում:

SjS-հոդակապով կազմությունների մեջ ամենամեծ քանակն ունեն երկրադադրիչ հարադիր ունեցող բայերը, ինչպես՝ արջաքուն մլրնել, աքլորակորիվ անել, գահավեժ լինել, դարագլուխ կազմել, երեսափեղ թողնել, թևաթափ անել, իրազեկ դառնալ: Այս կաղապարով կազմված հարադիրներում առաջին բաղադրիչը կարող է հնչյունափոխված լինել. շեշտի տեղափոխության հետևանքով ձայնավորը սղված է, ինչպես՝ գեղնասող դրա, դիմադարձ լինել, կրնկակոխ անել, ճրահան անել, մաքրածուր անել, ջրածածկ անել, սգահան անել, կիսամաշ լինել: Այս կաղապարով կազմություններում հնարավոր է նաև հետևյալը՝ առաջին բաղադրիչի -ի մասնիկը -ա- հոդակապին միանալով հնչյունափոխվել և դարձել է -ե-, ինչպես՝ գերեղարձ անել, գերեվար լինել, կաշեհան անել, փոշեխեղդ անել: Այս կաղապարով կազմված հարադիրները հանդես են գալիս անել, դառնալ, լինել, դրալ բայերի հետ:

SjS-հիմնական ձևույթ+է հոդակապ+կրկնվող հիմնական ձևույթ, ինչպես՝ թափեթափ տալ, խութեխութ զարկել, մոտեմոտ անել, պատեպատ գցել, սարեսար ընկնել, քարեքար գցել:

SjSa–հիմնական ձևով+հոդակապ+հիմնական ձևով+բառակազմական ձևով: Այս կաղապարով հարադիրներում բաղադրիչներից մեկը կարող է լինել հնչունափոխված, ինչպես՝ դիմադրություն ցուցաբերել, ժամադրություն ունենալ:

SjSf–հիմնական ձևով+հոդակապ+հիմնական ձևով+բառահարաբերական, ինչպես՝ բառակեսից հասկանալ, բեղադրելը սևանալ, ժամավճարով աշխատել, խաղաթղթերը խառնել, խոշորացուցով նայել փոքրագույն գրել:

SjSa<sup>f</sup>–հիմնական ձևով+հոդակապ+հիմնական ձևով+բառակազմական ձևով+բառահարաբերական ձևով: Սրանցում մեկ բաղադրիչը հիմնականում շեշտափոխական հնչունափոխության է ենթարկված, ինչպես՝ գիրակցության բերել, ուշադրության արժանացնել:

SajS–հիմնական ձևով+բառակազմական ձևով+հոդակապ+հիմնական ձևով, ինչպես՝ գնդակահար լինել:

SajSf–հիմնական ձևով+բառակազմական ձևով+հոդակապ+հիմնական ձևով+բառահարաբերական ձևով: Այս կաղապարով հարադիրներում ա-ն բայակերտ ածանց է, ինչպես՝ խոսելացավով բռնվել:

SajSa<sup>f</sup>–հիմնական ձևով+բառակազմական ձևով+հոդակապ+հիմնական ձևով+բառակազմական ձևով, ինչպես՝ նշանախոսության գնալ:

SjSff–հիմնական ձևով+հոդակապ+հիմնական ձևով+երկու բառահարաբերական ձևով, ինչպես՝ փակագծերը բացել:

aSjS–նախածանցավոր երկարմատ կազմությունները փոքրաթիվ են. ընդդիմաբախ լինել:

Շաղկապով կապակցված կազմություններ՝ ScS (ScS, ScCs<sup>f</sup>, ScSf, ScSa): Այս հարադիրներում հանդես են գալիս ու, հազվադեպ նաև շաղկապները:

ScS–հիմնական ձևով+շաղկապ+հիմնական ձևով: Այս կաղապարով կազմությունները շաղկապով կապակցված կազմությունների մեջ ամենամեծ թիվն են կազմում. դեսուրեն ընկնել, թաթուկրունկ լինել, լացուկոծ անել, կերուխում անել, կուզուպարզ անել, դաքուիկ վչել: Հնարավոր է նաև, որ առաջին կամ երկրորդ բաղադրիչը հնչունափոխված լինի, ինչպես՝ խորդուրորդ անել, ճարուճուր անել կեռումեռ անել:

SfcSf-հիմնական ձևույթ+բառահարաբերական ձևույթ+շաղկապ+հիմնական ձևույթ+բառահարաբերական ձևույթ, ինչպես՝ խերնուշառը իմանալ, դաշնություն իմանալ:

ScSf-հիմնական ձևույթ+շաղկապ+հիմնական ձևույթ+բառահարաբերական ձևույթ, ինչպես՝ թուրութվանքով խոսել, թուքումուրը մարտել, խելքումիզքը թռչել:

ScSa-հիմնական ձևույթ+շաղկապ+հիմնական ձևույթ+բառակազմական ձևույթ, ինչպես՝ գունդուկծիկ դառնալ, թևութիկունք լինել, դերուսդիրական դառնալ:

**Բանալի բառեր՝** բառակազմական, բառահարաբերական, բայական, հարադրություն, կաղապար, հարադիր, հիմնական, ձևույթ:

## THE WORD-FORMATION PATTERNS OF THE NOMINAL COMPONENTS OF ANALYTICAL VERBS IN ENGLISH AND ARMENIAN

S. K. SIMONYAN

*GSU Lecturer*

*Applicant at the National Academy of Sciences of RA*

The article is devoted to the comparative analyses of the word-formation patterns of the nominal components of analytical verbs in modern Armenian and English. The overwhelming majority of the nominal components of the analytical verbs in English have the S pattern which is determined by the analytical structure of English, whereas patterns with S and derivational and/or inflectional affixes are relatively small in number. In Armenian the most often used patterns are the S and SS, SjS. Nominal components of analytical verbs have various word-formation patterns in Armenian. Whereas in English we have one pattern which is the most often used (S) and other patterns are fewer in number in Armenian there are many other derivational, compound and derivational-compound patterns which are used in many analytical verbs.

# СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ФОРМЫ НОМИНАЛЬНЫХ КОМПОНЕНТОВ АНАЛИТИЧЕСКИХ ГЛАГОЛОВ В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

С. К. СИМОНЯН

Преподаватель ГГУ

Соискатель Национальной академии наук РА

Статья посвящена сопоставительному анализу словообразовательных форм номинальных компонентов аналитических глаголов в современном армянском и английском языках. В английском языке значительная часть номинальных компонентов аналитических глаголов имеют форму основы S, что связано с аналитической структурой английского языка, а формы основы с деривационными и / или флексиональными аффиксами относительно малы по числу. В армянском языке наиболее часто используемыми формами являются S и SS, SjS основы. Номинальные компоненты аналитических глаголов имеют различные формы словообразования в армянском языке. В отличие от английского языка, в котором чаще всего используется (S) основа, а количество других форм относительно меньше, в армянском существуют разные виды деривационных, составных и деривационно-составных форм, которые также часто используются в языке как формы основы S и SS, SjS.